ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

«ԵՔ-ԳՀԾՁԲ-19/91» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Ե. Սարգսյան

Հանձնաժողովի անդամներ՝ Լ. Բաբայան, Ծ. Մկրտչյան, Կ. Ղազարյան, Գ. Օրբելյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Ի. Եղիազարյան

Գնանշման հարցման ընթացակարգի փաստաթղթերը գնահատելու մասին
(Ե. Սարգսյան)

1. Փաստաթղթերի գնահատման՝

- վայրը՝ Երևանի քաղաքապետարանի վարչական շենք (ք. Երևան, Արգիշտիի փողոց 1), 321/1 սենյակ.
-օրը՝ 08.05.2019թ, -ժամը՝ 11:30

1.1 Որակավորման պահանջներին իրենց համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերն է ներկայացրել ԼՈՌԵ ՀՈԼԴԻՆԳ ՍՊԸ-ն, որի կողմից ներկայացրած փաստաթղթերում բացակայում է նախկինում կատարած պայմանագրի հավելված 1-ը, հաշիվ ապրանքագրերի պատճենները և պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն) պատճենները կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը: Ընդունել ի գիտություն, որ ԼՈՌԵ ՀՈԼԴԻՆԳ ՍՊԸ-ի կողմից ուղարկված երկու ֆայլերը վնասված են և հնարավոր չէ բացել:

1.2 Հաշվի առնելով վերոգրյալը, գնահատող հանձնաժողովը՝ ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» Կարգի 47-րդ կետով, որոշեց առաջարկել մասնակցին մեկ աշխատանքային օրում շտկել առկա անհամապատասխանությունը: Անհամապատասխանությունը սահմանված ժամկետում չշտկելու դեպքում մասնակցի հայտը կգնահատվի անբավարար և կմերժվի:

Հանձնաժողովի. Նախագահ՝		Ե. Սարգսյան
Անդամներ՝		Ծ. Մկրտչյան
		Կ. Ղազարյան
		Գ. Օրբելյան
		Լ. Բաբայան
Քարտուղար՝		Ի. Եղիազարյան